A 307

0120-10

ՊՐԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

## ՅԵՐԵՎԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ-ՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԻ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

396
0-59

ՅԵՐԵՎԱՆ 1933

396
0-59
56.244

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ № 9149. ՊԱՏՎԵՐ № 280. ՏԻՐԱԺ 200.

# ՅԵՐԵՎԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԻ 1933 ԹՎԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐԸ

## I. Պատժողովների նպատակը յեվ հիմնական անելիքները

*Այս տարի պատժողովներում ընդգրկված են մեծ քանակությամբ բանվորուհիներ յեվ բանվորների կանայք։ Պատժողովների հիմնական խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի նա բարձրացնի պատգամավորուհու քաղաքական, արտադրական և հասարակական ակտիվությունը, վերադաստիարակելու նորեկ բանվորուհիներին, վորոնք դեռ չեն բովվել պրոլետարական կաթսայում, «դարձնի նրանց անդասակարգ սոցիալիստական հասարակարգի գիտակից յեվ ակտիվ կառուցողներ»։*

*Պատժողովները պետք է օգնեն բանվորուհուն ընդգրկելու առաջավոր լավագույն բանվորների փորձը, ըմբռնելու կուսակցության գիծը սոցիալիզմի կառուցման գործում յեվ նրա անհաշտ պայքարը 2 ֆրոնտում բոլոր տեսակի յեվ գույնի ոպորտունիստների յեվ գլխավոր վտանգ աջ թեքման դեմ այս շրջանում։ Պատգամավորուհին պետք է ըմբռնի սոցշինարարության հիմնական խնդիրը յեվ կապի այն համաշխարհային պրոլետարիատի պայքարի հետ։ Պետք է աշխատանք-*

4 SEP 2013

ներն այնպես տանել, վորպեսզի պատգամավորուհին իր պատգամավորուհի յեղած ժամանակամիջոցում ըմբռնի մեր կուսակցության ղեկավար դերը սոցշինարարության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի հիմունքները պրոֆմիությունների դերը յեվ նշանակությունը — վորպես համաշխարհային հեղափոխության բազայի։

Պատգամավորուհիներն այս բոլորը պետք է յուրացնեն այն կոնկրետ մատերիալների հիման վրա, վորպիսին քննելու յեն նրանք, ինչպես պատժողովների աշխատանքների ընթացքում, նույնպես յեվ գործարանային արտադրական յեվ այլ նիստերում։

Պատժողովների ամբողջ աշխատանքների հիմքը պետք է կազմի 17-րդ կուսկոնֆերանսի յեվ Հ.Կ.(բ)Կ. Կենտկոմի յեվ Կ. Վ. Հ-ի 7-րդ պլենումի վորոշումները։

Պատժողովների աշխատանքի հիմքը պետք է կազմի նույնպես Մարքս-Լենինյան ուսմունքը յեվ մասնակից դարձնի բանվորուհիներին սոցշինարարության պայքարի առօրյա խնդիրներին, պետք է ոժանդակի ել ավելի բարձրացնելու նորեկ բանվորուհիների դասակարգային գիտակցությունը, ընդգրկելու նրանց սոցմրցման յեվ հարվածայնության մեջ, բարձրացնելու նրանց վորակը (մանավանդ նորեկների), ապահովի նրանց առաջքաշումը յեվ ավելի ինքնուրույն աշխատանքներում ոգտագործել։

Պատժողովների աշխատանքների յեվ ուշադրության կենտրոնում պետք է դրվեն պայքար ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կիրառման, Կենտկոմի 7-րդ պլենումի վորոշումների կենսագործման համար, ինչպես որինակ քաղաքային տնտեսությունների կոոպերատիվ, խորհրդային և կոլխոզտնտերի բնագավառում, վճռական պայքար տանել



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
S6057-66

կուլտ-կենցաղային նոր հիմնարկների ծավալման և յեղածների աշխատանքների բարելավման գծով, վորով պետք է ապահովվի կանանց ներգրավումը արտադրության մեջ, մասսայական աշխատանք լավագույն բանվորուհիներին կուսակցության և Լ.Կ.Յե.Մ. շարքերը ներգրավելու ուղղությամբ։

Պատժողովների աշխատանքներում մեծ տեղ պետք է տրվի նաև պատգամավորուհիների ինտերնացիոնալ և հակակրոնական դաստիարակությանը։

Պատժողովները պետք է հանդիսանան կուսազդեցության տարածողները աշխատավոր տնտեսուհիների և բանվորուհիների մեջ, առաջին հերթին նորեկների մեջ, դաստիարակելով և պատրաստելով նրանց, վորպես Լենինյան կուսշարքերը լրացնողների։

## 2. Պատժողովների աշխատանքների բովանդակությունը. Արտֆինպլան

Պատժողովների հիմնական խնդիրը հանդիսանում է ակտիվ պայքար ներգրավել բանվորուհիներին արտֆինպլանների կատարման համար նրանցից հարվածային բրիգադաներ կազմակերպելու, աշխատանքի սոցիալիստական մեթոդների յուրացման միջոցով մասնակից անել նրանց պրոգուլների դեմ, թռչողների, պոկողականության դեմ պայքարին յեվ բոլոր այն խոչնդոտների դեմ, վորոնք խանգարում են յեվ կազմալուծում ձեռնարկություններում բանվորուհիների աշխատանքների ենտուզիազմը։

Վորպեսզի պատգամավորուհիներին ավելի մեծ չափով մասնակից դարձնել ձեռնարկության յեվ առանձին

ցեխերի առաջ ծառացած արտադրական կոնկրետ խնդիրների լուծմանը, անհրաժեշտ է նախ վերակառուցել պատժողովների աշխատանքներն այնպես, վորպեսզի աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրվի ցեխ, բրիգադ, դրա համար անհրաժեշտ է ցեխերում պատգամավորուհիներից (ցեխերում աշխատող) կազմակերպել ցեխային պատգամավորական խմբակներ իր առանձին ղեկավարներով, ցանկալի յե կուսանդամ կամ ԼԿՅԵՄ անդամ։ Անհրաժեշտ է պատժողովներում յեվ ցեխային պատխմբակներում սիստեմատիկ կերպով լսել տվյալ գործարանի առանձին ցեխերի տնտեսական (ցեխի վարիչների) յեվ պրոֆաշխատանքների ղեկավարների զեկուցումները արտֆինպլանների կատարման ընթացքի, ՈՒՏ-ի աշխատանքների, պլանավորող բաժնի յեվ մյուսների զեկուցումները, այդ հարցերի քննության ընթացքում պետք է այդ հարցերը կապվեն մեր արդյունաբերության, մեր ամբողջ տնտեսության ընդհանուր խնդիրների հետ. յուրաքանչյուր այդպիսի զեկուցումների ժամանակ լավ կլինի լսել նայեվ զեկուցման վերաբերող, ինչպես որինակ տնտհաշվարկային բրիգադների աշխատանքների, տվյալ ցեխի կամ գործարանի սոցմրցման ու հարվածայնության արդյունքների, արտադրողականության բարձրացման կամ այլ հարցերի մասին յեվ նախորոք կազմակերպել ստուգող բանվորուհիների բրիգադայի հարակից զեկուցումը։

Այս բոլորի վերջում պետք է միանգամայն կոնկրետ և պրակտիկ միջոցառումներ մշակել, թե ինչպես պետք է պատժվողներն ամբողջությամբ յեվ առանձին պատգամավորուհիները մասնակցեն արտֆինպլանների համար մղվող պայքարին, հայտնաբերված այս կամ այն բացի



(բրակ, դիմազրկություն, հավասարաչափ և այլն) վերացման աշխատանքներին։

Ընդունված միջոցառումներն իրագործելու համար, նշանակվում է վորոշակի ժամկետ։

Պատգամավորուհիներից կազմված բրիգադաներին կամ անհատ պատգամավորուհիներին հանձնարարած յուրաքանչյուր աշխատանքի համար, պետք է պատժողովն իր հերթական նիստերում անպայմանորեն լսի նրանց կողմից համառոտ ինֆորմացիա իրենց կատարած աշխատանքների մասին։ Այսպիսով պատժողովը և յուրաքանչյուր պատգամավորուհին պետք է ներգրավի պրոգուլների, պոկողականության և արտադրության մեջ նկատվող ամեն տեսակի խոչընդոտների դեմ կազմակերպված պայքարում, վորի ժամանակ կոնկրետ միջոցառումներ մշակելիս, պետք է առաջավոր պատգամավորուհիների կողմից անհատորեն ուսումնասիրվեն առանձին պրոգուլշչիկները, աշխատանքային դիսցիպլինան խախտողները, միաժամանակ պետք է ուսումնասիրվեն նայեվ խախտման պատճառները և լուսաբանվեն մամուլում, պատի թերթերում և այլն։ Պրոգուլների, աշխատանքային դիսցիպլինայի խախտման դեմ պայքարը լավ ձևով տանելու համար, նպատակահարմար է բանվորների կանանց մասնակից անել պատժողովների աշխատանքներին և նրանց հետ ավելի սերտ կապ հաստատել։

### 3. Պրոֆմիությունները

Ինկատի ունենալով այն, վոր պատգամավորուհիների մեծ մասը պրոֆմիության յերիտասարդ անդամներ են կամ նույնիսկ բանվորուհի լինելով հանդերձ դեռ

չեն էլ անցել պրոֆմիության շարքերը, անհրաժեշտ է պատգամավորուհիներին սկզբից և յեթ ծանոթացնել պրոֆմիության խնդիրներին, նրանց կազմակերպչական կառուցվածքի և պրակտիկ աշխատանքների հետ։ Ավելի լավ կլինի, յեթե պատժողովի նիստերում լսվեն գործարկոմի հաշվետու զեկուցումները, պատխմբակներում ցեխային պրոֆկազմակերպիչների զեկուցումները, պրոֆմիութենական տարբեր ճյուղերի աշխատանքների մասին, արտադրական խորհրդակցությունների մասին, սոց. կենցաղային աշխատանքների և այլնի մասին, և հարակից լսեն պատգամավորուհիների զեկուցումները իրենց տարած աշխատանքների մասին, վորոնք կցված են այդ գծով աշխատելու, վորպես գործարկոմի այս կամ այն սեկտորին կցվածի։ Զեկուցումները լսելուց հետո պատ. ժողովը առանձնացնում է բանվորուհիներից կամ տնտեսուհիներից կազմված բրիգադա, կատարելու համար այս կամ այն կոնկրետ հանձնարարությունը. որինակ պրոֆշարքերը ընդգրկելու իրենց ցեխում, սմենայում, կամ թե ստուգել ինչպես են բանվորուհիները մասնակցում գործարկոմի աշխատանքներին և ապահովել նոր բանվորուհիների և պատգամավորուհիների ընդգրկումը հասարակական աշխատանքներում։

## 4. Հավաքական պայմանագրեր

Այս խնդրի ուսումնասիրությունը կայանում է նրանում, վորպեսզի պատգամավորուհիները յուրացնեն կոլպայմանագրի իմաստը, վորպես յերկկողմանի պարտականությունների պայմանագիր։ Յուրաքանչյուր պատգամավորուհի պետք է պարզ իմանա, թե ինչ



պարտականություն է դնում նրա վրա հավաքական պայմանագիրը։ Այդ նպատակով պատ. ժողովը լսում է պրոֆմիության և տրմինիստրացիայի զեկուցումները հավաքական պայմանագրի կատարման ընթացքի մասին և կոնկրետ միջոցառումներ նշում, վորպեսզի ապահովի նրա կատարումը։ Միաժամանակ անհրաժեշտ է, վորպեսզի պատգամավորուհիների ուշադրությունը սրել նոր ձևի վարձատրության մասին յեղած վորոշման (բրակի կամ պարապուրդի դեպքում) լայն կերպով մասսայականացնելով այդ վորոշման նշանակությունը։ Անհրաժեշտ է լսել նաև վորակի համար պայքարող բրիգադի զեկուցումը բրակի և պարապուրդի դեմ տարած իրենց պայքարի և ստացված կոնկրետ արդյունքների մասին։

## 5. Տեխնիկայի տիրապետում յեվ կանանց ուժի ներգրավում արտադրության մեջ

Ժողտնտեսության տեխնիկական վերազինման ծավալման բոլշևիկյան տեմպերը պահանջում են վորակավոր աշխատանքի հսկայական աճ։ Այս չտեսնված տեմպերը և բանվորական լայն մասսաների ու դրանց թվում և նոր բանվորուհիների հսկայական մասսաների կողմից տեխնիկական նորագույն պրոցեսների յուրացման անհրաժեշտությունը պատ. ժողովների առաջ կարևորագույն խնդիր է դնում 17-րդ կուս. կոնֆերանսի և Կ. Կ. 33 թ. հունվարյան պլենումի վորոշումների և ընկ. Ստալինի ցուցմունքների լայն ու լիտակ ըմբռնելու այդ խնդիրների նշանակությունը։

Այս չտեսնված տեմպերը և 2-րդ հնգամյակի խոշոր խնդիրների կատարումն ապահովելու համար և մեր 1-ին

հնգամյակի ընթացքում ձեռք բերած նվաճումները ավելի խորացնելու համար, անհրաժեշտ է ինչպես բանվորական, նույնպես և բանվորուհիների հսկայական մասսաները ներգրավվեն տեխնիկայի տիրապետման համար տարվող աշխատանքներում։

Յուրաքանչյուր բանվորուհի յեվ պատգամավորուհի պետք է իր ուշադրությունը յեվ ակտիվությունը ուղղի աշխատանքի վորակը բարձրացնելու վրա, պետք է անպայմանորեն ներգրավվի տեխնիկական ուսուցման խմբակներում։ Այս նպատակով պատժողովը լսում է տնտեսավարի զեկուցումը բանուժի գրության յեվ կադրերի պատրաստման գծով 32 թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին յեվ 33 թ. հեռանկարների, միաժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նորեկ բանվորուհիների տեխնիկական ուսուցման գործի վրա։ Ցանկալի յե, վորպեսզի այդ զեկուցման ընթացքում կազմակերպել 1 2 վորակավոր պրոֆ-տեխդպրոց կամ կուրսեր վերջացրած հին բանվորների յելույթ, այն խնդիրների շուրջը, թե ինչպես են նրանք կարողացել տիրապետել տեխնիկային, տեխնիկական կրթություն ձեռք բերելու հետեվանքով։ Վորպես պրակտիկ միջոցառումներ, կարելի յե առաջադրել հետեվյալը. կազմակերպել բանվորուհիների յեվ ցանկություն հայտնող բանվորների կանանց համար պրոֆտեխ. դպրոց կամ կուրսեր, շեֆություն կազմակերպել հին վորակավոր բանվորուհիների կողմից նորեկների վրա, կամ ամրացնել թույլերին վորակավոր բանվորներին։ Անհրաժեշտ է վորպեսզի պատժողովը տեղյակ լինի ինչպես գործարանային, նույնպես յեվ ցեխի կանանց ուժն ընդգըրկ-



վող պլանների հետ, վորպեսզի ապահովվի պատգամավորուհիների ակտիվ մասնակցությունը այդ ուղղությամբ պլանների կատարմանը։

## 5. Սոց-մրցումն ու հարվածայնությունը

2-րդ հնգամյակի 1-ին տարվա պլանների կատարումը պահանջում է կուսակցության և բանվոր դասակարգի վողջ ուժերի մոբիլիզացիան, սոց-մրցման ու հարվածայնության ել ավելի լայն ծավալում, վորպես պլանների կատարման կարեվորագույն լծակներ։

Պատժողովների լավագույն տնտհաշվարկային բրիգադաների աշխատանքների որինակներով, հանդիպական պլանների միջոցով ձեռք բերած հաջողությունները նկարագրելով պատգամավորուհիները համոզվում են, թե վորքան անհրաժեշտ է հետագայում ել ավելի ծավալել և ամրացնել սոցիալիստական աշխատանքի նոր ձեվերը, դրա համար լավ կլինի պատժողովներում լսել վորեվե տնտհաշվարկային բրիգադայի զեկուցումը և այն պատգամավորուհիների հարակից զեկուցումները, վորոնք մասնակցել են այդ բրիգադայի աշխատանքների ստուգատեսին, վորպեսզի ցույց տան պատգամավորուհիներին, թե ինչպես պետք է նոր ձեվերով աշխատել։ Այդ նյութի մշակման կոնկրետ արդյունք պետք է հանդիսանա պատգամավորուհիների գլխովին ընդգրկումը սոց-մրցման ու հարվածայնության մեջ։

## 7. Բանմատակարարումը

Բանվորական մատակարարման հարցերը, կոոպերացիայի դերը և սննդի խնդիրները մշակվում են կուսակցության դիրեկտիվների հիման վրա (1931 թվի

հոկտեմբերի 31-ի, Կ.Կ. հունիսյան պլենումի և այլ վորոշումներ)։ Այս վորոշումների պրակտիկ մշակումը պատ. ժողովներում պետք է տարվի զեկուցումների միջոցով, ինչպես որինակ Զ.Ռ.Կ-ի խանութային հանձնաժողովների, կամ թե բանվորական բանջարանոցի մասին և հարակից լսել այն պատգամավորուհիների զեկուցումները, վորոնք աշխատում են այդ կազմակերպություններում։ Լավ կլինի, նախքան այս հարցի պատրաստումը, կազմակերպել էքսկուրսիաներ դեպի հասարակական սննդի (ճաշարան, բանջարանոց, ճագարանոց և այլն) հիմնարկները, փակ խանութները և այլն։

Պատ. ժողովները պետք է բանվորուհիներից, բանվորների կանանցից բրիգադաներ կազմակերպեն փակ. բաշխիչների վրա կոնտրոլն ուժեղացնելու համար և հետևեն, վորպեսզի փակ խանութներում լինի կատարյալ մաքրություն, հերթերի վերացում, սպասողին լավ սպասարկում, տնային կրպակների կազմակերպում և այլն։

Անհրաժեշտ է բացատրել պատգամավորուհիներին ապրանքաշրջանառության ծավալման և մանավանդ մանրածախի նշանակությունը և տնտհաշվարկի կիրառումը. պատգամավորուհիները պետք է հասկանան ապրանքակուտակման ներքին չոգտագործված միջոցների հայտնաբերման մեջ իրենց ունենալիք դերը և դրանով աջակցեն սոցկուտակման գործին։

Պետք է հասնել այն նպատակին, վորպեսզի պատգամավորուհիները պարզեն իրենց համար խորհրդային կուլտուրական առևտրի էությունը։ Հասարակական սննդի գծով պ. ժ. պետք է ձգտի անպայմանորեն



սննդամթերքի, ճաշերի վորակի, բուֆետների և ճաշարանների մաքրությանը, կազմակերպի և լավացնի մանկական սննդի վիճակը։ Փակ բաշխիչի ճաշարաններին կցված պատգամավորուհիների հասարակական աշխատանքները պետք է սերտ կերպով կապված լինեն նույն հիմնարկների պ. ժ. հետ։

## 8. Քաղաքային տնտեսության վերակառուցման խնդիրները

Կ. Կ. Հունիսյան պլենումի յեվ 32 թ հունվարյան պլենումի վորոշումների հիման վրա պետք է քաղաքային տնտեսությունները վերակառուցեն ու ծավալեն իրենց աշխատանքները։ Վորպես պրակտիկ աշխատանք անհրաժեշտ է առանձին պատ. ժողովներում լսել զեկուցումներ քաղաքի շինարարության մասին, քաղաքի բարեկարգման, լուսավորության, բաղնիքների աշխատանքների լավացման յեվ այլն, յեվ կազմակերպել այն պատգամավորուհիների յելույթները, վորոնք աշխատում են քաղխորհուրդի տվյալ սեկցիայում։ Ցանկալի յե նման զեկուցումներ կազմակերպելուց հետո առանձնացնել հատուկ պատգամավորուհիների յեվ բանվորուհիների կանանց բրիգադաներ Քաղխորհրդին նակազի արված քաղտնտեսության լավացմանը վերաբերող կետերի ստուգման համար, ինչպես յեվ պագամավորուհիներին կցել առանձին թաղերի, փողոցների կամ հրապարակների յեվ այլն բացերը հայտնաբերելու յեվ Քաղխորհրդի պատ. ժողովների միջոցով առաջադրելու համար։

## 9. Յերեխաների դաստիարակության հարցեր

Որեցոր մեզ մոտ պահանջ է դրվում լայնացնելու մանկամսուրների, մանկապարտեզների ցանցը կիրառե-

լու պարտադիր ուսուցումը 7-ամյակի սահմաններում յեվ վճռական բարելավման յենթարկելու դպրոցական աշխատանքները։ Պատ. ժողովներում անհրաժեշտ է լսել գործարկոմի զեկուցումը տվյալ ձեռնարկության մանկական ձեռնարկների դրության մասին, յեվ ինչպես են օգտագործվում ՖՈՒԲՐ-ի գումարները կենցաղային հիմնարկների շինարարության վրա միաժամանակ, լավ կլնի, յեթե լսեն մանկամսուրի վարիչի մանկապարտեզի վարիչի զեկուցումները յեվ այդ նյութերի հիման վրա պետք է մշակել կոնկրետ միջոցառումներ մանկական ձեռնարկի աշխատանքները յերեխաների սննդի վիճակը լավացնելու ուղղությամբ։

Պատգամավորուհիների ակտիվությունը պետք է օգտագործել այն ուղղությամբ, վորպեսզի ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի միջոցով ընդգրկել բոլոր յերեխաներին, յեվ մսուրի ու մանկապարտեզի աշխատանքների տեվողությունը համապատասխան դարձնել գործարանի աշխատանքի տեվողությունը։ Անհրաժեշտ է պատգամավորուհիներին յեվ բանվորուհիներին մասնակից դարձնել այն դպրոցի ծնողական խորհրդի աշխատանքներին, վորը կցված է տվյալ գործարանին, վորպես շեֆ։

## 10. Գյուղշեֆական աշխատանքներ

Գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցման յեվ կոլլեկտիվացման վերելքը պահանջում է ավելի կոնկրետ դարձնել պրոլետարիատի ղեկավարությունը յեվ նրա լավագույն փորձերի փոխադրումը, կոլխոզները կոլլեկտիվ ձեվի աշխատանքի լավ կազմակերպման ուղղությամբ։ Քաղաքի պատ. ժողովները



գյուղական պատ. ժողովների միջոցով պետք է ամենալայն բացատրական աշխատանքները տանեն, թե ինչու յե արմատախիլ արվում կապիտալիզմի վերջին մնացորդները գյուղում համատարած կոլլեկտիվացման յեվ կուլակին վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու հիման վրա։ Քաղաքի պատ. ժողովները կարող են յեվ պետք է իրենց աշխատանքի փորձը փոխադրեն գյուղական յեվ կոլխոզային պատ. ժողովներին — ՔԳՁԱ ի միջոցով։

Այդ նպատակով պատ. ժողովները լսում են շեֆ. ընկերության զեկուցումը և հարակից շեֆ. գյուղի կոլխոզի զեկուցումը, վորպեսզի պատգամավորուհիները ծանոթանան, թե ինչպիսի տնտեսություն ունի տվյալ կոլխոզը, ինչպես է կազմակերպված աշխատանքը, ինչպես է կատարվում գարնանացանի կամ աշնանացանի պլանները, հացամթերումը յեվ կոնկրետ ձեվեր է մշակում կապը գյուղական պատ. ժողովի հետ եվ ավելի ուժեղացնելու համար։ Քաղաքի պատ. ժողովները շեֆությունը վորպես կապի մի ձեվ գյուղական պատ.-ժողովների նկատմամբ իրական յեվ արդյունավետ դարձնելու համար, պետք է կնքեն պ. ժ. միջեվ կոնկրետ ցուցանիշներով սոց-մրցման պայմանագրեր։

## 11. Պատժողովների մասնակցությունը ռազմականացման յեվ յերկրի պաշտպանության աշխատանքներին

Պատ.ժողովները պետք է սերտ կապված լինեն ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի հետ, հաճախակի լսեն միջազգային դրության մասին զեկուցումներ, պարզ պատկերացնեն դասակարգային պայքարի սրությունը, պատերազմի վտանգը յեվ կոնկրետ միջոցառումներ

մշակեն յերկրի պաշտպանության յեվ Կարմիր բանակին իրենց ցույց տալիք օժանդակության մասին։ Ցանկալի յե ամիսը մեկ անգամ լսել ՊԱԶՀ-Ավիաքիմի բջիջի զեկուցումը, ընդգրկել պատգամավորուհիներին յեվ բանվորուհիներին բջիջի աշխատանքներում յեվ կազմակերպեն հրաձգային, առաջին օգնության, ՀՕՊ-ի (հակաօդային պաշտպանության) խմբակներ յեվ դրուժինաներ։ Պատ.ժողովները պետք է ապահովեն նայեվ պատգամավորուհիների ակտիվ մասնակցությունը ՄՕՊՐ-ի յեվ ՄԱՄ-ի աշխատանքներին։

## 12. Մեթոդական ցուցմունքներ

Պատժողովները պետք է այնպես կազմակերպեն աշխատանքը, վոր վոչ միայն մոբիլիզացիայի յենթարկեն պատգամավորուհիների ուշադրությունը կուս. յեվ կառավարության այս կամ այն վորոշումների նկատմամբ, այլ յեվ պատգամավորուհիների միջոցով ներգրավեն մյուս պատգամավորուհիներին, յեվ հատկապես առաջին հերթին նորեկ բանվորուհիներին այդ խնդիրների կենսագործման շուրջը։

Զրույցները պետք է կազմակերպել այնպես, վորպեսզի մատչելի լինի պատգամավորուհիների համար, յեվ խնդիրները մշակման յենթարկել նրանց ակտիվ մասնակցությամբ։

Այս բոլոր հարցերի մշակման արդյունքը պետք է լինի այն, վոր պատգամավորուհիները յուրացնեն կուսակցության դերը յեվ նշանակությունը սոց. շինարարության բնագավառում, ըմբռնեն 17-րդ կուս. կոնֆերանսի յեվ 33 թ. հունվարյան պլենումի վորոշումների դրույթները ընկ. Ստալինի 6 ցուցմունքների համար



պայքարելու ամբողջ կարեվորությունը։ Անհրաժեշտ է ժամանակից անել պատգամավորուհիներին բջիջների դռնաբաց նիստերին։ Պատժողովի աշխատանքի այս օրիյենտիր ծրագիրը պետք է հիմք ծառայի, վորպեսզի յուրաքանչյուր պատ. ժողով, պատ. խմբակ, տեղական պայմաններից յելնելով աշխատանքի կոնկրետ ծրագիր մշակի, օրինակ՝ յերկաթգծի պատ. ժողովը պետք է զբաղվի յերկաթգծի տրանսպորտի աշխատանքների բարելավման հարցերով։ Կոոպերատիվ գծով պատ. ժողովները պետք է իրենց ուշադրության կենտրոնում ունենան արդֆինպլանների կատարման, սպառողին լավ սպասարկելու, ապրանքաշրջանառության ծավալման և այլ հարցերով։ Բանվորների կանանցից կազմված պ. ժ. (Սոյուզտրանս, Յերկոշ. արտել յեվ այլն) իրենց աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է դարձնեն քաղաքամերձ տնտեսությունների աշխատանքների վրա, քաղաքի կանաչացման, բնակարանների վերանորոգման բնակարանային կուլտուր-կենցաղային շինարարության, շենքերը մաքուր պահելու վրա, կազմակերպել ինքնագործ ճաշարաններ, լվացքատներ, մանկական հիմնարկներ յեվ այլ այնպիսի խնդիրներ, վորոնք դրված են տվյալ թաղամասի քաղխորհրդի պատ. խմբակի առաջ։ Բանվորների կանայք մի ռեզերվ են հանդիսանում բանուժ արտադրության մեջ լրացնելու համար։ Այդ տեսակետից անգրագիտության վերացման յեվ տեխնիկական ուսուցման խնդիրները պետք է պատ. ժողովներում մեծ տեղ բռնեն։ Ազգային փոքրամասնության պատ. ժողովներն իրենց աշխատանքները կազմակերպելիս պետք է անպայման հաշվի առնեն յուրաքանչյուր ազգության և պատգամավորուհի-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИ Академии Наук

ների կուլտուրական զարգացման առանձնահատկությունները: Պատ. ժողովները պետք է աշխատեն ոչ պակաս, քան ամիսը 2 անգամ, որպես կանոն պետք է աշխատել, որպեսզի յուրաքանչյուր պատգամավորուհի ունենա որևէ հասարակական աշխատանք (պարտականություն), դուրս հաճախող պատգամավորուհիները հասարակական աշխատանքներից չպետք է ազատվեն, միայն նրանց պետք է տալ թեթև և ուսմանը չխանգարող աշխատանք: Պատ. ժողովների աշխատանքների հաջողությունը պետք է չափել ոչ միայն նրանով, թե քանի հարց է քննվել պատ. ժողովում, այլ և ինչպես են որոշումները և կոնկրետ հանձնարարությունները պատգամավորուհիների կողմից կատարվել: Դրա համար էլ պետք է մեծ տեղ բռնեն պատգամավորուհիների սիստեմատիկ հաշվետվությունները իրենց աշխատանքների մասին, ինչպես և ուժեղացնել կապը ընտրողների հետ:

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна



ՀՀ Ազգային գրադարան
NL0233157

56.244